IDBank

№ Բ-4-2511
29 04 2026

# ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն բանկային երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում են ՀՀ ԱՆ Յոլյան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/52 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին (չափաբաժին 2-Ռիտուքսիմաբ 100մգ) ԷՅ ԼԱԲ ՖԱՐՄԱՍՅՈՒԹԻՔԱԼՍ ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 14,065,600 (տասնչորս միլիոն վաթսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ **դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի «Կոնվերսբանկ» ՓԲԸ 1930030219151000 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի կողմից ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/52 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին (չափաբաժին 2-Ռիտուքսիմաբ 100մգ) մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված 120 (մեկ հարյուր քսան) աշխատանքային օր, բայց ոչ ուշ քան 20.10.2026թ. ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ **hematology19@mail.ru** էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրինության Վարկային հաճախորդների հետ համագործակցության վարչության ղեկավար** **Հաբեթ Վելիկյան**

**Գլխավոր հաշվապահի տեղակալ/Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարչության ղեկավար** **Անուշ Հովհաննիսյան**

Կատարող՝ Գ.Գալոյան

G.Kanjyan

Digitally signed by G.Kanjyan
Date: 2026.04.29 16:47:23 +04'00'